

ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՁԵՎԻ (ՄԵԽԱՆԻԶՄԻ) ԻՐԱՎԱԿԱՆ  
ԷՈՒԹՅՈՒՆԸ<sup>2</sup>

Քրեադատավարական տեսության մեջ ընդհանուր ձևով առանձնացնում են դատական ակտերի վերանայման երկու հիմնական (դասական) ձևեր<sup>3</sup>, որոնք բնորոշվում են «վերաքննություն» (ծագում է լատիներեն՝ «appellare» բառից, որը թարգմանաբար նշանակում է բողոքարկել, դիմել բարձրագույն դատական ատյանին գործն ըստ էության լուծելու համար) և «վճռաբեկություն» (ծագում է լատիներեն «cassatio» կամ ֆրանսերեն «casser» բառից, որը թարգմանաբար նշանակում է կոտրել, ջարդել, ոչնչացնել, այսինքն՝ բեկանել

---

<sup>1</sup> ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ Ի.գ.դ., պրոֆ. Գ. Ս.Ղազինյան:

<sup>2</sup> Գիտական հոդվածը մշակվել և զեկուցվել է 15-T-5E236 «Դատական ակտերի վճռաբեկ վերանայման տեսական և գործնական հիմնախնդիրները» գիտական թեմայի շրջանակներում:

<sup>3</sup> Վերոհիշյալ դիտարկմանը, իհարկե, պետք է որոշակի վերապահումով մոտենալ այն առումով, որ դատական ակտերի վերաքննիչ և վճռաբեկ վերանայման կառուցակարգերի առանձնացումը բնորոշ է մայրցամաքային կամ ռամանագերմանական իրավական համակարգին: Մինչդեռ ընդհանուր իրավունքի կամ անգլոսաքսոնական իրավական համակարգին ընդհանրապես խորթ է «վճռաբեկություն» եզրույթը և դատական ակտերի վերանայման բոլոր հնարավոր ձևերը կլանվում են «վերաքննություն» հասկացության մեջ: Այլ կերպ՝ իրավական եզրույթ-բովանադակություն փոխհարաբերությունը իրավական տարբեր լեզուներում նույնական չէ: Անգամ նույն ռամանագերմանական կամ մայրցամաքային իրավական համակարգի շրջանակներում բարձրագույն դատական ատյանի կողմից իրականացվող վերանայման շրջանակներում առանձնացնում են երկու հիմնական մոդել՝ ֆրանսիական վճռաբեկությունը և գերմանական ռեիզիան: Ավելի մանրամասն տե՛ս *Sofie M.F. Geeroms*, Comparative law and legal translation. Why the terms Cassation, Revision and Appeal should not be translated. The American journal of Comparative Law, Vol. 50, No. 1, (Winter, 2002):

կամ չեղյալ հայտարարել ստորադաս դատարանի դատական ակտը) եզրույթներով<sup>1</sup>:

Տեսական որոշակի նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ դատավարագետներ դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը բնորոշում և դրա էությունը, տարբերիչ գծերը վերհանում են դատական ակտերի վերանայման մյուս ձևի՝ վերաքննության կամ ապելյացիայի հետ համեմատության և համադրության մեջ: Մասնագիտական գրականության մեջ վճռաբեկ վերանայման մեխանիզմի վերաբերյալ տեղ գտած բազմաթիվ բնորոշումները, որոշակի առանձնահատկություններով հանդերձ, բովանդակային առումով գրեթե նույնական են. տեսաբաններն ըստ էության միակարծիք են վերանայման այս ձևի էության մեկնաբանության հարցում՝ բնորոշելով այն որպես դատական ակտի վերանայում՝ սուկ օրենքով սահմանված ձևական պահանջների, այն է՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահպանման տեսանկյունից: Դասական իմաստով դատական ակտերի վճռաբեկ վերանայումը չի ենթադրում գործի ըստ էության քննություն, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցների անմիջական հետազոտման արդյունքում գործի փաստական հանգամանքների վերլուծություն և գործի փաստական կողմի վերանայում: Այլ կերպ՝ վճռաբեկ վերանայման շրջանակից դուրս է այն ամենը, ինչը կապված է գործի էության, դրա փաստական հանգամանքների և գործով հավաքված ապացույցների հետ: Բացի այդ, տեսական գրականության մեջ, իբրև վճռաբեկության բնութագրիչ գիծ, առանձնացվում է բողոքարկվող դատական ակտի փոխարեն նոր դատական ակտ կայացնելու (դա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Գ. Ս. Ղազինյան**, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., Երևանի համալս. հրատ., 2001, էջ 380, **А. В. Смирнов**, **К. Б. Калиновский**, նշված աշխատությունը, էջեր 592-593, **Лантух Н. В.**, նշված աշխատությունը, **Калмыков В. Б.** Кассационное производство в уголовном процессе: Проблемы теории и правоприменения. дисс... канд. юрид. наук. Казань, 2010, էջեր 11-40, **Сухова О. А.**, Кассационное обжалование судебных решений в Российском уголовном процессе. Дисс. ...канд. юрид. Наук. Саранск. 2004. էջ 18-61, **Sofie M. F. Geeroms**, նշված աշխատությունը, **J. A. Jolowicz**, Appeal, Cassation, Amparo and all that: What and why?, էջեր 2050-2051.

<http://biblio.juridicas.unam.mx/libros/2/643/26.pdf>

տական ակտը փոփոխելու) լիազորության բացակայությունը և միայն դատական ակտը բեկանելու և գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու կամ դատական ակտն անփոփոխ թողնելու հնարավորության առկայությունը: Սահմանազատելով վերաքննությունը վճռաբեկությունից՝ Ն. Վ. Լանտուխը բավականին պատկերավոր եզրահանգում է անում այն մասին, որ վերաքննության ինստիտուտը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ վերադաս դատական ատյանը կոչված է լավագույնս երաշխավորելու դատական ակտի արդարացիությունը, իսկ վճռաբեկ վարույթը՝ իրավաբանական այն ֆիկցիայի, որ դատարանի կողմից օրենքով սահմանված կարգի պահպանմանը կայացված ցանկացած դատական ակտ արդարադատ է<sup>1</sup>:

Դատական ակտերի վերանայման նկարագրված կառուցակարգը քրեադատավարական գիտության մեջ բնորոշվում է «մաքուր վճռաբեկություն» եզրույթով: Դատավարագետների բնորոշմամբ՝ այն զուտ տեսական կառուցակարգ է, որը մշակվել և հիմնավորվել է ֆրանսիացի դատավարագետների կողմից<sup>2</sup>:

Որոշ տեսաբաններ «մաքուր» կամ «ֆրանսիական» վճռաբեկության բնութագրական գծերի շարքում ընդգրկում են նաև հետևյալ հատկանիշները՝

1. գործը վերանայվում է միայն կողմերի խնդրանքով,
2. օրենքով հստակ սահմանված է այն խախտումների շրջանակը, որոնք հիմք են դատական ակտը բեկանելու համար՝ անկախ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունից,
3. վճռաբեկ վերանայման ծավալը սահմանափակված է կողմերի ներկայացրած բողոքի սահմաններով<sup>3</sup>,
4. վճռաբեկ վերանայման առարկա են կազմում միայն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս *Лантух Н. В.*, նշված աշխատությունը, էջ 30:

<sup>2</sup> Տե՛ս Ortolan et Ledeau Elements de droit penal. Penalite-juridictions-procedure. Paris. 1855.; Garrou R. Traite theorique et pratique d'instruction criminelle et de la procedure penale, t.I. Paris. 1894. P. 10. մեջբերումն ըստ՝ *Лантух Н. В.*, նշված աշխատությունը, էջ 22:

<sup>3</sup> Տե՛ս *Сухова О. А.*, նշված աշխատությունը, էջ 26:

<sup>4</sup> Տե՛ս *Головко Л. В.*, Новеллы УПК РФ: прогресс или институциональный хаос?/ Апелляция, кассация, надзор: новеллы ГПК РФ и УПК РФ. Первый

Այսպիսով, վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձև՝ հիմնական բնութագրական կամ տարբերիչ առանձնահատկությունը հանգում է նրան, որ այն ենթադրում է դատական ակտերի վերանայում սուսկ իրավունքի հիմքով: Այստեղ տեղին է հիշատակել պրոֆ. Լ. Վ. Գոլովկոյի այն բնորոշումը, որ «մաքուր» կամ դասական իմաստով վճռաբեկությունը ոչ այլ ինչ է, քան իրավական փաստարկների փոխանակում կամ բանավեճ (քննարկում) իրավունքի մեկնաբանության կարևոր խնդրի շուրջ: Վճռաբեկության քննարկվող հատկանիշը, սակայն, միանշանակ չի ընկալվում դատավարագետների շրջանում: Այսպես, օրինակ, նույն Լ. Վ. Գոլովկոյի կարծիքով մաքուր վճռաբեկության կամ առհասարակ դատական ակտերի վերանայման համակարգի դասական մոդելը (երբ վերաքննիչ վերանայման արդյունքում կայացված դատական ակտն ըստ էության վերջնական է, և վճռաբեկ վերանայման առարկա կարող է դառնալ միայն դրա իրավական կողմը) թույլ է տալիս լուծել մի շարք խնդիրներ: Դրանց շարքում հատկապես կարևորվում է այն, որ դասական իմաստով վճռաբեկության ինստիտուտի գոյության պայմաններում բարձրագույն դատական աստյանը, որը և պետք է օժտված լինի վճռաբեկ վերանայման լիազորություններով, կարողանում է ոչ միայն ուղղել դատական սխալները, այլև ապահովել դատական պրակտիկայի միասնականությունը<sup>1</sup>: Սակայն մյուս կողմից մաքուր վճռաբեկությունը կամ վճռաբեկության ֆրանսիական (դասական) մոդելը նաև բազմաթիվ քննադատությունների է արժանանում: Քննադատությունը հիմնականում հանգում է նրան, որ վճռաբեկ վերանայման սահմանափակումը միայն գործի իրավական կողմով անխուսափելիորեն զուգորդվում է ֆորմալիզմով (ձևականությամբ), ձևի ակնհայտ գերակայությամբ բովանդակության նկատմամբ<sup>2</sup>:

Թեև տեսական գրականության մեջ, ինչպես արդեն նշվել է, գոյություն ունի որոշակիորեն ընդունված տեսակետ առ այն, որ «մա-

---

опыт критического осмысления: - Юрист, Москва, 2011, *В. Смирнов, К. Б. Калининский*, նշված աշխատությունը, էջեր 592-593:

<sup>1</sup> Տե՛ս *Головко Л. В.*, նշված աշխատությունը:

<sup>2</sup> Տե՛ս *Чельцов-Бebutov M. A.*, Курс уголовно-процессуального права. М., 1995, էջեր 506-508:

քուր» վճռաբեկության ֆրանսիական մոդելը<sup>1</sup> մի շարք այլ երկրների դատական վերանայման համակարգում գոյություն ունեցող այս ինստիտուտի նախատիպն է, սակայն միևնույն ժամանակ այսօր որևէ երկրի դատական համակարգում դժվար է գտնել մաքուր ձևով պահպանված վճռաբեկության դասական մոդելը<sup>2</sup>: Նահանջը մաքուր վճռաբեկությունից դրսևորվում է վճռաբեկ ատյանի գործունեության մեջ վերաքննության որոշակի տարրեր ներմուծելով: Այս նահանջն ունի իր օբյեկտիվ պատճառները: Իբրև այդպիսին շատ հաճախ նշվում են, օրինակ, մարդկային և նյութական ռեսուրսների դատավարական խնայողության խնդիրը, իրավունքի և փաստի հարցերի հստակ տարանջատման անհնարիությունը, քանի որ գործի փաստական կողմին վերաբերող հարցերը ճնշող մեծամասնությամբ կարելի է վերաձևակերպել և ներկայացնել որպես իրավական խնդիր<sup>3</sup>:

Դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմում վերաքննության տարրերի ընդգրկումը կամ այսպես կոչված՝ վերաքննության և վճռաբեկության սինթեզը քրեադատավարական տեսության մեջ հայտնի է որպես վճռաբեկության խառը մոդել: Վճռաբեկության խառը մոդելը ենթադրում է՝

1. վերանայման ռեիզիոն տարրերի առկայություն (երբ վճռաբեկ վերանայման բողոքը սուսկ առիթ է վերանայման վարույթ հարուցելու համար, և վերանայումն իրականացնող դատարանը որևէ կերպ կաշկանդված չէ բողոքի հիմքերով և հիմնավորումներով),

2. դատարանի կողմից գործի էության մեջ խորանալու հնարավորություն.

---

<sup>1</sup> Տեսական գրականության մեջ մայրցամաքային կամ ռոմանագերմանական իրավական համակարգում վճռաբեկության ինստիտուտի շրջանակներում առանձնացնում են երկու հիմնական մոդել՝ ֆրանսիական վճռաբեկությունը (մաքուր վճռաբեկության մոդել) և գերմանական ռեիզիոն (խառը վճռաբեկության մոդել): Տե՛ս *Sofie M. F. Geeroms*, նշված աշխատությունը, էջ 203:

<sup>2</sup> Տե՛ս *J. A. Jolowicz*, Appeal, Cassation, Amparo and all that: What and why?, էջեր 2050-2051. <http://biblio.juridicas.unam.mx/libros/2/643/26.pdf> 12-47

*Гуценко К. Ф., Головкин Л. В., Филимонов Б. А.*, Уголовный процесс западных государств, - М., 2000.

<sup>3</sup> Տե՛ս *J. A. Jolowicz*, նշված աշխատությունը, նույն տեղում:

3. դատական ակտը փոփոխելու լիազորության առկայությունն առանց գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու<sup>1</sup>:

Վճռաբեկության խառը մոդելի օրինակ են գերմանական ռևիզիան և խորհրդային վճռաբեկությունը: Խորհրդային վճռաբեկությունը և գերմանական ռևիզիան, սակայն, ևս ունեն իրենց առանձնահատկությունները, որոնցով էապես տարբերվում են միմյանցից: Այսպես, օրինակ, նույն գերմանական ռևիզիան մի շարք ընդհանրություններ ունի ֆրանսիական վճռաբեկության հետ, և գերմանական ռևիզիայի՝ ֆրանսիական վճռաբեկությունից սահմանազատման և այն որպես խառը վճռաբեկության մոդել դիտարկելու հիմնական չափանիշը դատական ակտը փոփոխելու լիազորության առկայությունն է<sup>2</sup>: Իսկ, օրինակ, խորհրդային վճռաբեկությունը ենթադրում է գործի ոչ միայն իրավական, այլև փաստական կողմի վերանայում<sup>3</sup>, վերանայման ռևիզիոն տարրերի լայն առկայություն, երբ վճռաբեկ վերանայման բողոքը սոսկ առիթ է վերանայման վարույթ հարուցելու համար, և վերանայումն իրականացնող դատարանը որևէ կերպ կաշկանդված չէ բողոքի հիմքերով և հիմնավորումներով: Իսկ վերջին հանգամանքն իր հերթին արդյունք է հանրայնության սկզբունքի խորհրդային գաղափարախոսության<sup>4</sup>:

Դատական ակտերի վերանայման խորհրդային վճռաբեկ-ռևիզիոն մեխանիզմի (ձևի) մեջ վերաքննության տարրերի լայն ընդգրկումը, կարծում ենք, որոշակիորեն պայմանավորված է, ի թիվս այլոց, այն հանգամանքով, որ խորհրդային օրենսդրությունն ի սկզբանե հրաժարվել է վերաքննությունից՝ ապելյացիայից՝ դիտարկելով այն զուտ որպես բուրժուական ինստիտուտ: Ժամանակակից դատավարագետների բնորոշմամբ խորհրդային վճռաբեկ-ռևիզիոն վերանայման բնութագրական հատկանիշներից գործի փաստական

---

<sup>1</sup> Տե՛ս *Лантух Н. В.*, նշված աշխատությունը, էջեր 26-27:

<sup>2</sup> Տե՛ս *Sofie M. F. Geeroms*, նշված աշխատությունը, *Лантух Н. В.*, նշված աշխատությունը, էջեր 77-82:

<sup>3</sup> Տե՛ս *Гродзинский М. М.*, նշված աշխատությունը, էջ 14:

<sup>4</sup> Տե՛ս *Ковгун Н. Н.*, նշված աշխատությունը, էջ 329:

կողմը վերանայելու հատկանիշը փոխանցվել է նաև ժամանակակից ռուսական վճռաբեկությանը<sup>1</sup>:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող են եզրահանգել, որ մաքուր վճռաբեկությունը, ավելի շատ և ավելի շուտ տեսական մոդել է, և գործնականում դրան բնորոշ բոլոր տարրերի հետևողական և անշեղ իրացումը, մասնավորապես գործի վերանայումը զուտ դրա իրավական կողմով սահմանափակելը, դժվար է պատկերացնել՝ պայմանավորված, արդեն իսկ հիշատակված, գործի իրավական և փաստական կողմի միջև հստակ սահմանագծեր անկացնելու անհնարինությանը: Ինչպես նկատում են որոշ տեսաբաններ, վճռաբեկության «մաքրությունը», դրա օտարվածությունը քննվող գործի էությունից թվացյալ է, մտացածին, իսկ իրականում վճռաբեկ դատարանը գործի էությունը վերանայում է և իր որոշումներում ելնում է գործի էությունից<sup>2</sup>: Մաքուր վճռաբեկության կառուցակարգը որոշ դեպքերում իրոք կարող է նաև հանգեցնել ձևի անհարկի գերակայության բովանդակության նկատմամբ, դատավարական խնայողականության կարևորագույն պահանջի անտեսման: Վերջին դիտարկումը հատկապես տեղին է մաքուր վճռաբեկության բնութագրական այն հատկանիշի կապակցությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ վերանայում ի-

---

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ գործող ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված վճռաբեկության ինստիտուտին, մինչև այն կվերածվեր օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բացառիկ վերանայման եղանակի: Մինչ այդ ՌԴ քրեադատավարական օրենսդրությունը ևս նախատեսում էր վճռաբեկության խառը մոդել: Դա, կարծում ենք, կարելի էր բացատրել նրանով, որ թեև ՌԴ գործող քրեադատավարական օրենսդրությամբ վերաքննության ինստիտուտը վերականգնվել է, այդուհանդերձ, այն հանդես է գալիս, որպես դատական ակտերի վերանայման սահմանափակ եղանակ այն առումով, որ տարածվում էր բացառապես հաշտարար դատարանների կայացրած դատական ակտերի նկատմամբ: Ուստի վճռաբեկ ատյանն առավելապես հանդես էր գալիս ոչ թե որպես երրորդ, այլ երկրորդ ատյան՝ վերանայելով ոչ թե վերաքննիչ, այլ առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտերը: Եվ վճռաբեկության խառը մոդելի նախատեսումն ըստ էության նպատակ ուներ երաշխավորելու անձի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտի գոնե մեկ անգամ փաստի հիմքով բողոքարկման և վերանայման իրավունքը:

<sup>2</sup> Տե՛ս *Лангух Н. В.*, նշված աշխատությունը, էջ 28:

րականցնող դատարանը պետք է բացառապես լիազորված լինի անփոփոխ թողնելու ստորադաս դատարանի դատական ակտը կամ բեկանելու այն, և գործն ուղարկելու ստորադաս դատարան նոր քննության: Այնուամենայնիվ, հակառակ ծայրահեղություն կարող է լինել խորհրդային վճռաբեկությունը, որը ենթադրում է վերաքննության և վճռաբեկության ֆունկցիոնալ կրկնողություն: Այս առումով, կարծում ենք, տեղին է Ն. Գ. Մուրատովայի այն դիտարկումը, որ. «վերաքննիչ և վճռաբեկ վարույթները չպետք է կրկնեն միմյանց: Դրանք դատավճռի բողոքարկման երկու տարբեր մակարդակներ են՝ կապված ինքին քրեական գործի երկու կողմերի (ասպեկտների) հետ: Նախ, ցանկացած քրեական գործով հետազոտվում են հանգամանքներ, փաստեր, իրադարձություններ, դեպքեր, որոնք կարող են հանգեցնել անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելուն, վերջինիս նկատմամբ մեղմ կամ խիստ պատիժ նշանակելուն: Մյուս կողմից, ցանկացած գործով առկա է իրավական գործընթաց»<sup>1</sup>:

Կարծում ենք՝ վճռաբեկության կոնկրետ մոդելի ընտրությունը և դրա օրենսդրական կանոնակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ վճռաբեկությունը չնույնացվի դատական ակտերի վերանայման մյուս հիմնական ձևի՝ վերաքննության հետ և չանտեսվի վերանայման այս ձևերի այն էական տարբերիչ առանձնահատկությունը, որ եթե վերաքննությունը ենթադրում է գործի և՛ փաստական, և՛ իրավական կողմը վերանայելու հնարավորություն, ապա վճռաբեկության մեխանիզմը սահմանափակված է միայն գործի իրավական կողմով: Այլ կերպ՝ վճռաբեկ վերանայման ձևի շրջանակներում կարող է ստուգվել միայն ստորադաս դատարանի կողմից դատական ակտ կայացնելիս նյութական և դատավարական օրենքի պահանջների պահպանումը: Վճռաբեկ վերանայման մեխանիզմը կարող է թույլ տալ խորանալ գործի էության մեջ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ստորադաս դատարանի կողմից թույլ տված իրավական սխալներն ուղղելու համար, և չի ենթադրում գործի փաստական կողմի վերանայում: Եվ դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը գործադրող մարմինը (մեզանում՝ ՀՀ վճռաբեկ դա-

---

<sup>1</sup> St´u *Муратова Н. Г.*, Система судебного контроля в уголовном судопроизводстве: вопросы теории, законоода тельного регулирования и практики, - Казань, 2004, էջ 200:



տարանը) չպետք է իրավունքի դատարանից վերածվի փաստ քննող դատարանի: Նման եզրահանգման համար հիմք է ծառայում առավելապես ռոմանագերմանական իրավական ընտանիքի շրջանակներում բարձրագույն դատական ատյանների իրավական կարգավճակի վերաբերյալ տեսական նյութի ուսումնասիրությունը: Այն մասնավորապես վկայում է, որ ռոմանագերմանական իրավական ավանդույթի շրջանակներում վճռաբեկ վերանայման գործառույթը որպես կանոն բարձրագույն դատական ատյանների բացառիկ գործառույթն է, իսկ դատական այդ ատյանների իրավասությունը սահմանափակված է բացառապես իրավունքի հարցերով (Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Նիդերլանդներ, Բուլղարիա, Իտալիա, Իսպանիա, Ռումինիա)<sup>1</sup>:

Ինչպես արդեն նշվել է դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը, տեսաբանների բնորոշմամբ, ենթադրում է **օրինական ուժի մեջ չմտած** դատական ակտերի օրինականության, հիմնավորվածության և արդարացիության ստուգում: Քննարկվող հատկանիշը ոչ միայն զուտ տեսական նշանակություն, այլ նաև գործնական կարևորություն ունի: Վերջին եզրահանգման օգտին է խոսում այն

---

<sup>1</sup> Տե՛ս *Sofie M. F. Geeroms*, նշված աշխատությունը, *J. A. Jolowicz*, նշված աշխատությունը: Կարծում ենք՝ վճռաբեկության մեխանիզմում վերաքննության տարրերի անհարկի ընդլայնման դրսևորում է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ին ընդունված թիվ ՀՕ-48-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում դատական սխալի իմաստով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի նույնացումը վերաքննիչ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերի հետ: Խոսքը հատկապես վերաբերում է այնպիսի հիմքերի, ինչպիսիք են՝ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված՝ դատարանի հետևությունների անհամապատասխանությունը դատարանում հետազոտված ապացույցներին և դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանությունը կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին, որոնք զուտ փաստի հարցեր են և ենթադրում են գործի փաստական կողմին անդրադառնալու անհրաժեշտություն: Դրանց հետ կապված՝ վճռաբեկ վերանայման շրջանակներում կարող են քննարկման առարկա դառնալ միայն, օրինակ, համապատասխանաբար ապացույցների գնահատման քրեադատավարական պահանջների խախտումները կամ նյութական օրենքի սխալ կիրառումը:

հանգամանքը, որ վճռաբեկ վերանայման մեխանիզմի այս էական հատկանիշի պարզաբանումից է մեծապես կախված նաև վճռաբեկ բողոքարկման իրավական հետևանքների հստակեցումը, բողոքարկվող՝ ստորադաս դատարանի կայացրած դատական ակտի հետագա իրավական ճակատագրի որոշումը<sup>1</sup>:

Խնդիրը գործնական առավել կարևորություն է ստանում ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում այս հարցի հստակ օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում: Այսպես, օրենսգրքի 402-րդ և 412-րդ հոդվածներում ամրագրված վերոշարադրյալ նորմերում սահմանված՝ համապատասխանաբար վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելու և դրանց վճռաբեկ բողոքարկման ժամկետների համադրումը վկայում է, որ վճռաբեկության կարգով կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Մինչդեռ օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասում ուղղակիորեն նշված է, որ վճռաբեկ վերանայման ենթակա են վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Ըստ այդմ էլ, հստակ կանոնակարգված չեն վճռաբեկ բողոքարկման իրավական հետևանքները: Քննարկվող խնդրի առնչությամբ պետք է նշել, որ քրեադատավարական տեսության մեջ ընդունված է տարբերակել

---

<sup>1</sup> Առհասարակ քրեադատավարական տեսության մեջ առանձնացնում են դատական ակտերի բողոքարկման հետևյալ հնարավոր իրավական հետևանքները.

1) դեյոյուտիվ (ֆր. «devolu» բառից, որը թարգմանաբար նշանակում է բաժին հասած), բողոքարկման դեյոյուտիվ արդյունքը ստորադաս դատարանի կողմից կարգավորվող իրավահարաբերության փոխանցումն է վերադաս դատական ասյան (այսպես կոչված՝ «փոխանցման ազդեցություն»)

2) սուսպենզիվ (լատ. «suspensus» բառից, որը թարգմանաբար նշանակում է հետաձգված, դադարեցված). բողոքարկման սուսպենզիվ արդյունքը դատական ակտի իրավական հետևանքների դադարեցումն է (այսպես կոչված՝ «հետաձգող ազդեցությունը»): Այս առումով բողոք բերելու կարևորագույն իրավական հետևանքն այն է, որ դրանով հետաձգվում է դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելու պահը: Դատավճռը համարվում է դեռևս օրինական ուժի մեջ չմտած, քանի դեռ կողմերը պահպանում են այն բողոքարկելու իրավունքը: Եթե նշված ժամկետում կողմերը չեն իրացնում դատական ակտի բողոքարկման իրենց իրավունքը, ապա այն մտնում է օրինական ուժի մեջ:

դատական ակտերի բողոքարկման (վերանայման) սովորական կամ բնականոն և բացառիկ եղանակներ: Դատական վերանայման այս տեսակների սահմանազատման չափանիշը բողոքարկման առարկան է: Այսպես, եթե սովորական վերանայման առարկա են կազմում ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, ապա օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն բացառիկ վերանայման կարգով: Այս տարանջատումը բխում է կրկին դատվելու անթույլատրելիության («non bis in idem»)՝ Եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված հիմնարար սկզբունքից և հիմնված է քրեական հետապնդման սպառնալիքի վերջավորության գաղափարի վրա: Կրկին դատվելու անթույլատրելիության կանոնը կոչված է երաշխավորելու իրավական որոշակիության և դատական ակտերի կայունության կարևորագույն սկզբունքները, որոնք այլ պահանջների հետ մեկտեղ ենթադրում են, որ գործով վերջնական որոշումը չպետք է կասկածի տակ դրվի: Համաձայն Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության բացատրական եզրակացության՝ որոշումը համարվում է վերջնական, եթե այն ձեռք է բերել իրավաբանական ուժ («res iudicata»): Մինևույն ժամանակ Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը և դրան համահունչ ՀՀ օրենսդիրը նախատեսում է այս սկզբունքից շեղվելու իրավաչափ հնարավորություն միայն համապատասխան բացառիկ հիմքերի առկայության դեպքում: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը՝ որպես բացառիկ երևույթ, ինչպես արդեն նշվել է, ենթադրում է նաև բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն, որոնք չեն կարող նույնական լինել դատական ակտերի սովորական բողոքարկման հիմքերի հետ: Եթե բացառիկ վերանայման ցանկացած հիմքով օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող են բողոքարկվել, ապա հակառակը բացառվում է: Այսպես, եթե օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող են բողոքարկվել նյութական և դատավարական իրավունքի ցանկացած խախտման հիմքով, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ապա օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով:

Տեսության մեջ գերակշռող տեսակետի համաձայն՝ վերաքննությունը և վճռաբեկությունը դատական ակտերի բողոքարկման (վերանայման) սովորական եղանակներ են<sup>1</sup>: Մենք նույնպես հակված ենք այն մտտեցմանը, որ վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման բացառիկ եղանակ դիտելը կհանգեցնի դատական ակտերի կայունության սկզբունքի ոչ իրավաչափ սահմանափակման այնպիսի իրավիճակի, երբ նյութական կամ դատավարական իրավունքի սովորական խախտման հիմքով հնարավոր կլինի բողոքարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը<sup>2</sup>:

Եզրահանգելով, որ վճռաբեկ բողոքարկման առարկա կազմում են ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, կարծում ենք, քննարկման կարիք ունի նաև այն հարցը, թե արդյոք վճռաբեկության մեխանիզմն ընդգրկում է միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայումը: Վերոնշյալ հարցադրման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ քրեադատավարական տեսության մեջ դատական ակտերի բողոքարկման սովորական ձևերի շարքում վերաքննությունից և վճռաբեկությունից բացի առանձնացնում են նաև մասնավոր բողոքարկումը կամ բողոքարկումը մասնավոր գանգատի հիման վրա, որն ի դեպ նախատես-

---

<sup>1</sup> Տե՛ս *Лангух Н. В.*, նշված աշխատությունը, էջ 36, *Калмыков В. Б.*, նշված աշխատությունը, էջ 12:

<sup>2</sup> Այս առումով, օրինակ, ռուս դատավարագետ Լ.Վ.Գոլովկոն լուրջ քննադատության է արժանացնում ՌԴ դատախիրավական բարեփոխումների արդյունքում օրենսդրական այն նորամածությունը՝ համաձայն որի վճռաբեկությունը դարձել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ձև: Վերջինս նախնական դիտարկում է անում այն մասին, որ հակառակ հայրենական քրեական դատավարությունը եվրոպական մոդելին մերձեցնելու, մասնավորապես, ի թիվս այլոց վճռաբեկության դասական եվրոպական մոդելը վերականգնելու օրենսդրի ձգտումներին, օրենքը ոչ միայն չի վերականգնել «դասական վճռաբեկությունը», այլ խեղաթյուրել է դրա էությունը նույնիսկ ավելին, քան ժամանակին խորհրդային իրավունքը: Ինստիտուցիոնալ առումով նման օրենսդրական կարգավորումը համարելով ոչ ճիշտ՝ պրոֆ. Լ. Վ. Գոլովկոն գտնում է, որ ինստիտուցիոնալ այդ սխալի պատճառը «վերջնական որոշում» և «օրինական ուժի մեջ մտած որոշում» հիմնարար դատավարական հասկացությունների սկզբունքային տարբերության թյուրըմբռնումն է:

ված էր խորհրդային քրեադատավարական օրենսդրությամբ<sup>1</sup>: Եվ մասնավոր բողոքարկման՝ վերաքննությունից և վճռաբեկությունից սահմանազատման հիմնական չափանիշը բողոքարկման առարկան է: Այսպես, ի տարբերություն վերաքննության (վճռաբեկության)՝ մասնավոր վերանայման կարգով բողոքարկման ենթակա են գործն ըստ էության չլուծող կամ միջանկյալ դատական ակտերը:

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է գործն ըստ էության չլուծող դատական ակտերը (խոսքն առավելապես վերաբերում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում կայացված դատական ակտերին) վերաքննիչ, ապա վճռաբեկ դատարան բողոքարկելու հնարավորություն: Եվ այս դատական ակտերի բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունները մասամբ՝ այնքանով, որքանով կարգավորված չեն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը կանոնակարգող 39-րդ գլխի նորմերով, կարգավորվում են վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանում վարույթը կանոնակարգող համապատասխանաբար նույն օրենսգրքի 10-րդ և 11-րդ բաժնի նորմերով:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ևս տարբերակում է վերաքննության (վճռաբեկության) կառուցակարգը՝ որպես եզրափակիչ (գործող քրեադատավարական օրենսդրության իմաստով գործն ըստ էության լուծող) դատական ակտերի վերանայման մեխանիզմ՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ հատուկ վերանայումը՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ դատարանի կողմից իրականացվող գործունեություն ոչ եզրափակիչ (գործող քրեադատավարական օրենսդրության իմաստով գործն ըստ էության չլուծող) դատական ակտերի վերանայման կապակցությամբ, որը, սակայն, վերաքննություն կամ վճռաբեկություն չէ: Մասնավորապես, նախատեսված է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման այնպիսի կառուցակարգ, ինչպիսի հատուկ վերանայումն է վերաքննիչ և վճռաբեկ դատարանում (Նախագծի 49-րդ գլուխ): Նշված կառուցակարգի առանձնացումն ինքնանպատակ չէ: Այն ոչ միայն հստակ տարանջատում է գործն ըստ էության լուծող և չլուծող դատական

---

<sup>1</sup> Տե՛ս **Գ. Ս. Ղազինյան**, նշված աշխատությունը:

ակտերի վերանայման ձևերը, այլև նախատեսում է դրանց համապատասխան, մասնավորապես հատուկ վերանայման պարագայում բողոքարկման և բողոքի քննության պարզեցված ընթացակարգ:

Առանձին ռուս դատավարագետներ ևս առաջարկում են օրենսդրորեն նախատեսել միջանկյալ դատական ակտերի բողոքարկման՝ վերաքննիչ և վճռաբեկ վերանայումից տարբեր, պարզեցված ընթացակարգ<sup>1</sup>: Ընդ որում, ինչպես բխում է Նախագծի համապատասխան դրույթների, ինչպես նաև բողոքարկման պարզեցված ձևի ներմուծման կողմնակիցների առաջարկների վերլուծությունից, միջանկյալ կամ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման և բողոքի քննության ընթացակարգի պարզեցումն առավելապես վերաբերում է բողոքարկման և բողոքի քննության ժամկետների կրճատմանը, ինչպես նաև վերանայման արդյունքում դատարանի իրավասության (վերջինիս կողմից կայացվող դատական ակտերի) շրջանակի սահմանափակմանը: Դատական ակտերի վերանայման այս երկու ձևերի սահմանազատման կարևոր չափանիշ, կարծում ենք, կարող է լինել նաև այն, որ եթե վճռաբեկ վերանայման մեխանիզմը ենթադրում է օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բողոքարկման հնարավորություն, ապա միջանկյալ, օրինակ նույն մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված դատական ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ դրանք ենթակա են անհապաղ կատարման: Եվ ըստ այդմ, մասնավոր բողոքարկման առարկա են դառնում արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Ընդ որում հատուկ ընդգծման կարիք ունի նաև այն հանգամանքը, որ Նախագծի 401-րդ հոդվածի կարգավորումից բխում է, որ վճռաբեկ դատարանում գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայման առարկա կարող են դառնալ միայն օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտության դեպքում: Եվ կարգավորումն ըստ էության նաև նպատակ ունի նվազեցնելու վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությունը: Այս տեսանկյունից, կարծում ենք՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրական փոփոխությո-

---

<sup>1</sup> St 'u *Жеребятев И., Шамарлин Л.*, Некоторые вопросы реализации правосудия в уголовном судопроизводстве // Уголовное право. - 2004. - No 3, էջ 84:

յունների քննարկվող խնդրի առումով առավել հեղափոխական կարգավորումներ նախատեսելու հնարավորություն կարող է ընձեռել: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Սահմանադրական փոփոխությունների նախագծի 163-րդ հոդվածին, որը նախատեսում է մասնագիտացված դատարաններ ձևավորելու հնարավորություն: Այս սահմանադրական դրույթը՝ ճյուղային օրենսդրության մեջ ինկորպորացնելու և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված դատարաններ ստեղծելու՝ Սահմանադրական փոփոխությունների նախագծի՝ դատական իշխանության գլխին վերաբերող հիմնավորումներում տեղ գտած գաղափարն իրացնելու դեպքում կարելի է ապահովել համապատասխան մասնագիտական գիտելիքներ և փորձ ունեցող դատավորների կողմից մինչդատական վարույթի նկատմամբ որակյալ դատական վերահսկողության իրականացում: Իսկ դա իր հերթին կարող է վճռաբեկ բողոքարկման առարկայի ծավալից միջանկյալ դատական ակտերը բացառելու և ըստ այդմ վճռաբեկ դատարանների ծանրաբեռնվածությունը էապես թեթևացնելու հնարավորություն ընձեռել: Հաշվի առնելով, որ մինչդատական վարույթի նկատմամբ մասնագիտացված դատական վերահսկողության պարագայում էապես կբարձրանա համապատասխան դատական ակտերի որակը, կարծում ենք, ավելի քան բավարար կարող է լինել դրանք մեկ անգամ վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորություն ընձեռելը՝ դրանով իսկ երաշխավորելով նաև անձի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտի բողոքարկման և այն վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքը: Ընդ որում, վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտերի վերանայումը կարող է իրավունքի իրապես արդյունավետ պաշտպանության միջոց դառնալ, եթե օրենսդիրը հրաժարվի այն կարգավորումից՝ համաձայն որի՝ վերաքննիչ դատարանը լիազորված է իրականացնելու նաև վճռաբեկության կարգով գործերի քննություն՝ դրանով իսկ երաշխավորելով անձի՝ դատական ակտը գոնե մեկ անգամ փաստի հիմքով բողոքարկելու իրավունքը: Իհարկե, պետք է ընդունել, որ միջանկյալ դատական ակտերի վերանայման հետ կապված՝ ևս կարող է իրավական նորմի մեկնաբանության (իրավունքի զարգացման) առումով օրենքի միատեսակ կիրառության խնդիր առաջանալ: Կարծում ենք՝ խնդրի լուծման արդյունավետ մոդել կարող է լինել ընդ-

հանուր իրավունքի ավանդույթի շրջանակներում, մասնավորապես Անգլիայում կիրառվող՝ «case stated» (կողմերի միջև համաձայնությունը փաստերի շուրջ) կոչվող ինստիտուտը: Դրա էությունն այն է, որ ստորադաս դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կազմվում է գործով հաստատված համարված փաստական հանգամանքների շարադրանքը, որը ներկայացվում է Անգլիայի Բարձր դատարան՝ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ կարծիք ստանալու համար<sup>1</sup>:

Ցանկացած քրեադատավարական ինստիտուտի համակողմանի հետազոտությունը ենթադրում է նաև այդ ինստիտուտի առջև դրված խնդիրներն ուսումնասիրելու անհրաժեշտություն: Առաջ անցնելով՝ նշենք, որ դատական ակտերի վերանայման այս ձևի առջև դրված խնդիրները կանխորոշող նշանակություն կարող են ունենալ դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման հետ առանձին հարցերի օրենսդրական կարգավորման համար:

Ժամանակին ռուս նշանավոր դատավարագետ Ի. Յ. Ֆոյնիցկին բավական հետաքրքիր դիտարկում է արել առ այն, որ վճռաբեկության ինստիտուտը հետապնդում է երկու բնույթի խնդիրներ՝ դատական-քաղաքական և դատական-գործնական: Դատական-քաղաքական խնդիրը վերջինիս բնորոշմամբ վճռաբեկ դատարանին հաղորդում է դատական հսկողության բարձրագույն մարմնի բնույթ և նշանակություն, իսկ ինքնին վճռաբեկությունը դառնում է ի շահ օրենքի իրականացվող գործունեություն՝ կտրված գործի էությունից: Դատավարագետի խոսքերով՝ դատական-գործնական խնդրի վրա է հիմնված վճռաբեկությունը՝ ի շահ գործի, երբ վճռաբեկ դատարանի որոշումը սահմանափակվում է միայն այդ կոնկրետ գործի ճակատագիրը լուծելով: Առաջին խնդրից բխում է ամբողջ պետության համար վճռաբեկ դատարանի միասնականությունը, իսկ երկրորդից՝ վճռաբեկ վերանայման լիազորությունների բաժանումը մի քանի դատարանների միջև: Եվ ի վերջո հեղինակի եզրահանգումն այն է, որ ռուսական քրեական դատավարությունը մշտապես ձգտել է վճռաբեկությանը՝ ի շահ գործի՝ անտեսելով դրա երկրորդ տեսակը, երբ

---

<sup>1</sup> Appeals by way of Case-Stated. A Beginner's Guide. [http://www.3tg.co.uk/library/appeals\\_by\\_way\\_of\\_case\\_stated\\_\\_a\\_beginners\\_guide.pdf](http://www.3tg.co.uk/library/appeals_by_way_of_case_stated__a_beginners_guide.pdf), <http://www.legislation.gov.uk/ukpga/1980/43/section/111>



վճռաբեկ աստյանը հանդես է գալիս սուսկ որպես ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին<sup>1</sup>:

Ըստ էության նույն դատական-քաղաքական և դատական-գործնական խնդիրներ են առանձնացնում այն դատավարագետները, որոնց համոզմամբ դատական ակտերի վերանայման այս ձևը կոչված է համապատասխանաբար՝

1. նպաստելու քրեական, քրեադատավարական և մյուս օրենքների ճիշտ մեկնաբանությանը և կիրառմանը (դատական պրակտիկայի ղեկավարումը), աջակցելու քրեական գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը,

2. ապահովելու մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը<sup>2</sup>:

Այսպիսով, վճռաբեկ վերանայումը կոչված է լուծելու երկու հիմնական խնդիր, այն է՝ դրանով մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, որն ավելի ճիշտ կլինի վերաձևակերպել որպես դատական սխալների ուղղման խնդիր, ինչպես նաև օրենքների միատեսակ մեկնաբանության ապահովումը և ըստ այդմ միասնական դատական պրակտիկայի ձևավորումը:

Դատական սխալների ուղղումը և ըստ այդմ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն առհասարակ դատական վերանայման համակարգի առջև դրված հիմնական խնդիրներից մեկն է: Եվ այս խնդրի լուծման հարցում անմասն չի կարող մնալ նաև այդ համակարգը կազմող տարրերից մեկը՝ վճռաբեկությունը: Վերջին եզրահանգման օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ մեզանում դատական վերանայման այս ձևը գործադրող մարմինը երկրի բարձրագույն դատական աստիճանն է, և որպես դատական իշխանության բարձրագույն մարմին՝ կոչված է իրականացնելու արդարադատություն:

Սակայն մինևույն ժամանակ՝ դատական ակտերի վերանայման այս ձևը կոչված է լուծելու դատական վերանայման մեկ այլ

---

<sup>1</sup> St 'u *Фойницкий И. Я.*, Курс уголовного судопроизводства, Т 1,2, Изд-е 3, СПб., 1902.

<sup>2</sup> St 'u *Ковтун Н. Н.*, Судебный контроль в уголовном судопроизводстве России, էջ 85, Sarstedt W Die Revision in Strafsachen. Essen, 1962. էջ 31, մեջբերումն ըստ *Лангух Н. В.*, նշված աշխատությունը, էջ 81:

կարևոր խնդիր ևս, այն է՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովումը: Ցանկացած իրավական համակարգի պայմաններում այս գործառույթի կարևորությունն ընդգծել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարանը) «C. R.»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության և «S. W.»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով որոշումներում, որտեղ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «Նորմը որքան էլ հստակ ձևակերպվի իրավունքի ցանկացած համակարգում, ներառյալ՝ քրեականում, դատական մեկնաբանման տարրն անխուսափելի է: Միշտ գոյություն կունենա խրթին դրվագների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին հարմարվելու անհրաժեշտություն: Մասնակից պետությունների իրավական ավանդույթը վկայում է այն մասին, որ դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր նպաստում է քրեական իրավունքի առաջընթաց զարգացմանը: Քրեական պատասխանատվության կանոնների պարզաբանումը ենթադրում է դատական պրակտիկայի կողմից դրանց հետևողական մեկնաբանում: Կոնվենցիային համապատասխանելու համար անհրաժեշտ է, որ մեկնաբանման արդյունքները համապատասխանեն իրավախախտման բնույթին, իսկ որոշումը լինի ողջամտորեն կանխատեսելի»<sup>1</sup>: Մեկ այլ՝ Բեյանն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարան իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «Բարձրագույն դատական ատյանի դերը հենց նախադեպային պրակտիկայում հնարավոր հակասությունների կանոնակարգումն է: Բարձրագույն դատական ատյանների վրա է դրված նման հակասությունների վերացման և իրավական նորմերի՝ ստորադաս դատարանների համար ուղղորդող նշանանակություն ունեցող մեկնաբանության պարտականությունը: Հակառակ պարագայում, ինքնին բարձրագույն դատական ատյանը դառնում է իրավական անորոշության աղբյուր»<sup>2</sup>:

<sup>1</sup> St 'u **S. W. v. the United Kingdom**, 1995 թվականի նոյեմբերի 25-ի վճիռ, գանգատ թիվ 20166/92, 36-րդ կետը, **C. R. v. the United Kingdom**, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, գանգատ թիվ 20190/92, 34-րդ կետը:

<sup>2</sup> St 'u **Beian v. Romania**, 2007 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ, գանգատ թիվ 30658/05, 39-րդ կետը, **Baranowski v. Poland**, գանգատ թիվ 28358/95, 56-րդ կետը, ECHR 2000-III, **Sovtransavto Holding v. Ukraine**, գանգատ թիվ 48553/99,

Օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդրի կարևորությունը հատուկ ընդգծում են նաև տեսաբանները՝ նշելով, որ իրավակիրառ պրակտիկայում իրավական չափանիշների միատեսակ կիրառությունն օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի, իրավունքի գերակայության, կանխատեսելի և արդար դատաքննության գաղափարների լիարժեք իրացման գործուն մեխանիզմ է, միասնական և կայուն իրավական ռեժիմի գոյության կարևորագույն երաշխիք<sup>1</sup>: Բարձրագույն դատական ատյանների կողմից օրենքի միատեսակ մեկնաբանությունը և ըստ այդմ միասնական դատական պրակտիկայի ապահովումը տեսաբանները համարում են օբյեկտիվ անհրաժեշտություն՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են անընդհատ փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ բարդ իրավական խնդիրներ է առաջացնում իրավակիրառ պրակտիկայում, իրավական համակարգի աստիճանական համապատասխանեցումը՝ իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և միջազգային իրավունքի նորմերին, սկզբունքորեն նոր կատեգորիայի գործերի ի հայտ գալը, որոնք ունեն կարևոր հասարակական և պետական նշանակություն<sup>2</sup>: Տեսական գրականության մեջ փորձեր են կատարվել նաև բացահայտելու «օրենքի միատեսակ կիրառություն և մեկնաբանություն», «միասնա-

---

97-րդ կետը, ECHR 2002-VII, *Paduraru v. Romania*, գանգատ թիվ, 63252/00, 98-րդ կետը:

<sup>1</sup> Проблемы обеспечения единообразия в истолковании правовых норм судами общей юрисдикции и арбитражными судами (на примере Закона об ОСАГО), Быстров А. Н. Общество и право, 2009.

[http://www.juristlib.ru/book\\_5731.html](http://www.juristlib.ru/book_5731.html)

<sup>2</sup> **Скитович В. В., Седельник В. В.**, Правосудие и правоохранительная деятельность в евразийском пространстве К вопросу об имплементации судебного прецедента в правовую систему Республики Беларусь.

<http://www.eurasian-advocacy.ru/pravosudie-i-pravookhranitelnaya-deyatelnost-v-evrazijskom-prostranstve/1468-k-voprosu-ob-implementatsii-sudebnogo-pretседента-v-pravovuyu-sistemu-respubliki-belarus>

**Вишневский Г. А.**, Единство судебного правоприменения как способ обеспечения верховенства права.

<http://ecsocman.hse.ru/data/2012/01/06/1270397099/2-2011-4.pdf>

կան դատական պրակտիկա» եզրույթների բովանդակությունը<sup>1</sup>: Տեսական գրականության մեջ իրավաչափորեն քննադատության է արժանանում «միասնական դատական պրակտիկա» հասկացության բնորոշումը սոսկ որպես գործող օրենսդրության դրույթների միատեսակ մեկնաբանություն և կիրառություն, վեճերի լուծման որոշակի ձևական շարքնի անվերապահորեն հետևելը՝ առանց պրակտիկ իրողության բովանդակային կողմին անդրադառնալու<sup>2</sup>: Նման մոտեցումը համարելով ձևական՝ տեսության մեջ իրավաչափ դիտարկում է արվում առ այն, որ եթե միասնական դատական պրակտիկայի ապահովման նպատակ է դիտարկվում բացառապես քննության առարկա վեճի և դրա նկատմամբ կիրառման ենթակա նորմերի բնույթով պայմանավորված նմանատիպ գործերի ձևական միասնականացված քննությունն ու լուծումը, ապա ձևավորված ցանկացած, այդ թվում՝ և իրավախախտ պրատիկան կհամապատասխանի առաջ քաշված նպատակներին: Իսկ նման իրողությունը հակասում է արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքներին: Հիմնական քննադատությունը հանգում է նրան, որ ցանկացած բովանդակության նորմատիվ ակտերի պահանջների ձևական պահպանումը բացառում է մարդու իրավունքներով, իրավունքի համընդհանուր սկզբունքներով առաջնորդվելու անհրաժեշտությունը և թույլատրում է այդ թվում նաև ոչ իրավական օրենքների կիրառումը: Մահմանադրորեն արդարացված և միատեսակ կարող է ճանաչվել միայն այն պրակտիկան, որտեղ գործում է բացառապես իրավունքի սկզբունքների և իրավական օրենքների վրա հիմնված վեճերի լուծման մոդել, որը ծառայում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությանը: Դատական իշխանության անկախությունը և իշխանությունների տարանջատման սկզբունքը ենթադրում են դատավորների հնարավորությունը հրաժարվել ոչ իրավական օրենքները կիրառելուց և կիրառել միայն այն օրենքը, որն իրավական բովանդակություն ունի<sup>3</sup>: Որոշ տեսաբաններ իրավաչափորեն զարգացնում են այն գաղափարը, դատա-

<sup>1</sup> Տե՛ս *Вишневский Г. А.*, նշված աշխատությունը, Материалы VII Всероссийского съезда судей Российской Федерации // Российская юстиция. 2009. N 9:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս *Вишневский Г. А.*, նշված աշխատությունը:

կան մեկնաբանության դերն ու նշանակությունը օրենքի դրույթների՝ իրավունքի համընդհանուր սկզբունքներին համապատասխան մեկնաբանության վրա հիմնված միասնական դատական պրակտիկայի ձևավորումն է<sup>1</sup>:

Այսպիսով, տեսաբաններն օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդրի ապահովման տակ իրավաչափորեն ներառում են իրավունքի զարգացման գործառույթը: Բարձրագույն դատական ատյանին իրավունքի զարգացման գործառույթ վերապահելը բխում է իրավունքի գերակայության հիմնարար ժողովրդավարական սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունից, որը ենթադրում է իրավական օրենքների գերակայություն: Իսկ օրենքի՝ իրավական լինելու չափանիշը դրա համապատասխանությունն է սահմանադրական իրավունքներին ու ազատություններին, իրավունքի հիմնարար սկզբունքներին: Այսպիսով, բարձրագույն դատական ատյանին նման գործառույթ վերապահելը կոչված է բացառելու դատական իշխանության մարմինների կողմից ոչ իրավական օրենքների կամ օրենքների ոչ իրավական մեկնաբանության կիրառությունը: Իրավունքի զարգացման գործառույթի իրականացման վառ օրինակ կարող է լինել առկա օրենսդրական կարգավորումների մեկնաբանությունը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում գործող՝ պետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթներին, վերազգային դատական մարմինների պրակտիկայում մշակված չափանիշներին համապատասխան: Օրենքի միատեսակ կիրառությունը դասական իմաստով ապահովվում է պարտադիր դատական նախադեպեր ստեղծելու ճանապարհով<sup>2</sup>: Իրավաստեղծ գործունեությունն ընդհանուր (նախադեպային)

---

<sup>1</sup> *Добровольский В. И.* Анализ и комментарий корпоративного законодательства и судебной практики // Справ. правовая система «Гарант-эксперт», *Кони А. Ф.*, Нравственные начала в уголовном процессе. М., 1956, էջեր 85, 87-88, *Силаева О. С.*, Судебный прецедент как источник права в России, Вестник Челябинского государственного университета, 2011, № 19(234), էջեր 13-18: *Муромцев С. А.* Право и справедливость // Сборник правоведения и общественных знаний, М., 1983, Т. 1, էջ 11:

<sup>2</sup> Բարձրագույն դատական ատյանի կողմից օրենքի միատեսակ կիրառության և միասնական դատական պրակտիկայի ապահովման ուրույն եղանակ էր ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի ղեկավար պարզաբանումների

իրավունքի երկրներում պատմականորեն դատական իշխանության մարմինների (բարձրագույն դատական աստիճանների) գործունեության օրգանական մասն է կազմել: Ինչպես նշվում է արտասահմանյան տեսական գրականության մեջ, ընդհանուր իրավունքի երկրներում դատավորները ստեղծում են իրավունք և դատական նախադեպի ուսմունքը ընդհանուր իրավունքի ավանդույթներին պատկանող ամերիկյան իրավական համակարգի պարադիգմատիկ առանձնահատկությունն է<sup>1</sup>: Այդուհանդերձ, այս գործառույթների իրականացումը խորթ չէ նաև մայրցամաքային իրավունքի երկրների դատական իշխանության բարձրագույն մարմիններին, որոնց դերակատարությունն այս հարցում իհարկե փոքր-ինչ այլ բնույթ ունի: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ֆորմալ առումով պարտադիր նախադեպի («stare decisis») կանոնի բացակայությանը: Այսինքն, այստեղ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովում է ոչ թե պարտադիր նախադեպեր ստեղծելու, այլ այն հանգամանքի ուժով, որ ստորադաս դատարանները հակված են հետևելու բարձրագույն դատական աստիճանների կողմից տրված մեկնաբանություններին՝ խուսափելու համար ապագայում իրենց կայացրած դատական ակտերի հնարավոր բեկանումից<sup>2</sup>: Իհարկե, հարկ է նշել, որ վերջին տարիներին այս տարբերությունն աստիճանաբար զիջում է իր դիրքերը<sup>3</sup>: Վերը շարադրված դատողություններն արդիական են նաև Հայաստանի Հանրապետության՝ որպես մայրցամաքային իրավունքի ավանդույթներ կրող երկրի դատական համակարգի համար:

Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը, համաձայն որի՝ որոշակի փաստական հանգա-

---

ինստիտուտը, որոնք մշակվում էին դատական պրակտիկայի ամփոփման արդյունքների հիման վրա (աբստրակտ մեկնաբանություն), որոնք դե ֆակտո հանդես էին գալիս որպես նմանատիպ գործերի քննության և լուծման մոդելներ, սակայն իրավական պարտադիր ուժ չունեին:

<sup>1</sup> Տե՛ս *Jan Komarek*, *Judicial lawmaking and Precedent in Supreme Courts*, London School of Economics & Political Science (LSE), Legal Studies Working Paper No. 4/2011, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս *Sofie M. F. Geeroms*, նշված աշխատությունը, *Н. В. Ляптых*, նշված աշխատությունը, 2011, էջեր 67-82:

<sup>3</sup> Տե՛ս *Mauro Cappelletti*, «The Doctrine of Stare Decisis and the Civil Law: A Fundamental Difference - or no Difference at All?», (1981), էջեր 381-395:

մանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ, նախադեպային համակարգի ներմուծման որոշակի տարրեր է պարունակում:

Այդուհանդերձ, ռումանագերմանական իրավական ընտանիքի շրջանակներում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը օրենքն է, իսկ դատական նախադեպի՝ որպես իրավունքի ինքնուրույն աղբյուրի գոյությունը՝ վիճելի, դեռևս արդիական է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության հետ կապված՝ դատական իշխանության բարձրագույն մարմնի կողմից օրինաստեղծ գործունեության իրականացման և օրենսդիր մարմնի գործառնությունների յուրացման խնդիրը<sup>1</sup>: Հաշվի առնելով մեկնաբանության դերի և նշանակության վերաբերյալ կատարված վերլուծությունը, չհավակնելով սույն հոդվածի շրջանակներում խնդրի խորը վերլուծության՝ կարծում ենք՝ կարելի է դիտարկում անել առ այն, որ բարձրագույն դատական ատյանի կողմից օրենքի իրավական մեկնաբանության ապահովումը, այդ թվում՝ Եվրոպական կոնվենցիայի դրույթների, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, օ-

---

<sup>1</sup> St 'u *Скитович В. В., Седельник В. В.*, նշված աշխատությունը, *Адигезалова Г. Э.*, Судебный прецедент как основной источник права в теории О. Холмса, Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики, № 3-1 / 201. <http://cyberleninka.ru/article/n/sudebnyy-pretседent-kak-osnovnoy-istochnik-prava-v-teorii-o-holmsa> *Силаева О. С.*, Судебный прецедент как источник права в России. Вестник Челябинского государственного университета, 2011, № 19(234) <file:///C:/Users/User/Downloads/sudebnyy-pretседent-kak-istochnik-prava-v-rossii.pdf> *Рожнов А. П.*, К вопросу о признании судебной практики юридическим источником уголовного права Вестник Волгоградского государственного университета, Серия 5, Юриспруденция, Выпуск № 1 / 2012: <http://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-priznanii-sudebnoy-praktiki-yuridicheskim-istochnikom-ugolovnogo-prava>

րենսդրական կարգավորման թերությունների և բացերի վերհանումը, օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի բուն էությունն է. գործառույթ, որի իրականացումն ինքնանպատակ չէ և ի վերջո ուղղված է ցանկացած պետության պետության առջև դրված կարևորագույն խնդրի՝ իրավունքի գերակայության նվաճմանը: Սակայն որոշակիորեն խնդրահարույց կարող է լինել այն իրավիճակը, երբ դատական իշխանության մարմինն իրավամեկնաբանության ճանապարհով լրացնում է օրենսդրական կարգավորման բացը: Ընդ որում, օրենսդրական կարգավորման բացի լրացման օրինակներ կարելի է գտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության մեջ: Այս առումով, կարծում ենք, տեղին է հիշատակել **Գ. Միքայելյանի** գործով Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումը, որով ձեռքբերված և կալանավորված անձի դատավարական կարգավիճակից գատ նախատեսվեց նաև բերվածի դատավարական կարգավիճակը (ըստ էության քրեական դատավարություն ներմուծվեց նոր սուբյեկտ)<sup>1</sup>: Վ. Մինասյանի գործով իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ կալանքի ժամկետի կասեցման հնարավորություն նախատեսող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը հակասում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասին, Վճռաբեկ դատարանը սահմանել է նախաքննական մարմնի կողմից գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ նաև անձի կալանքի հարցը լուծելու որոշակի իրավակարգավորումներ<sup>2</sup>: Տ. Քամայանի գործով կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանն ուղղակիորեն ներմուծեց դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցը լուծելիս տուժողի դրքորոշումը ճշգրտելու պարտադիր իրավական պահանջ, որն ուղղակիորեն բացակայում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում<sup>3</sup>: Նշված որոշումներում ակնհայտ է Վճռաբեկ դատարանի կողմից օրենսդրական բացերի լրացման գործառույթի իրականացումը: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի

<sup>1</sup> Տե՛ս Գագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս Վարդան Մինասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ՀՅՔԴԴ/0106/01/08 որոշումը:

<sup>3</sup> Տե՛ս Տ. Քամայանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշումը:



գործունեության իրավաչափությունը հիմնավորող փաստարկ, կարծում ենք, կարող է լինել այն, որ նշված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով Վճռաբեկ դատարանն ապահովել է համապատասխան խնդիրների առնչությամբ Եվրոպական կոնվենցիայի դրույթների, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, միջազգային իրավական կարգադրագրերի ինկորպորացումը մեր ներպետական իրավական համակարգ և դրանց անմիջական գործողությունը: Բացի այդ, օրինակ, նույն Վ. Մինասյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումը<sup>1</sup> գործնականում լայն կիրառություն է ստացել, թեև մինչև օրս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ չեն կատարվել:

Այսպիսով, դատական ակտերի վճռաբեկ վերանայումը կոչված է լուծելու առհասարակ դատական վերանայման ինստիտուտի առջև դրված կարևորագույն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են դատական սխալների ուղղումը և օրենքի միատեսակ կիրառությունը: Դատական ակտերի վճռաբեկ վերանայման այս երկու հիմնական խնդիրները միմյանց չեն փոխբացառում, և հենց այս խնդիրների ողջամտորեն հավասարակշռության գաղափարն է դրված Վճռաբեկ դատարանի՝ արդեն իսկ հիշատակված Սահամանադրական փոփոխությունների նախագծով առաջարակված սահմանադրաիրավական կարգավիճակում: Թեև նշված խնդիրները միմյանց չեն փոխբացառում, այդուհանդերձ դրանցից և որևէ մեկին ակնհայտ առավելություն տալը կարող է հանգեցնել մյուսի անհամաչափ սահմանափակման: Այսպես, նույն օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրաիրավական գործառնությունը հանգեցրել է, ինչպես արդեն նշվել է, դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման թույլատրական (դիսկրեցիոն) կարգ նախատեսելուն, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար այն պետք է համապատասխանի որոշակի բովանդակային չափանիշների: Իրավական համակարգերի գլոբալիզացիայի արդի պայմաններում բարձրագույն դատական ատյանին իրավունքի զարգացման և միասնական իրա-

---

<sup>1</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած կարգավորումների կոնվենցիոնալ պահանջներին անհամապատասխանությունն արձանագրել է նաև Եվրոպական դատարանը Մինասյանն ընդդեմ Հայաստանի գործով 2014 թվականի ապրիլի 18-ի վճռում:

վաքաղաքականության (օրենքի միատեսակ կիրառության) ապահովման գործառնությունների վերապահումը և այս խնդրի արդյունավետ իրացման նպատակով վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման ուղղված համապատասխան մեխանիզմների ներմուծումը իրավաչափ է, սակայն, այդուհանդերձ, հարց է ծագում, թե արդյոք այս գործառնության արդյունավետ իրականացումը պետք է դիտարկել որպես գերխնդիր և ապահովել դրա իրացումը ընդհուպ մինչև արդարադատության շահերի հաշվին: Կարծում ենք բոլոր դեպքերում Վճռաբեկ դատարանը՝ որպես դատական իշխանության բարձրագույն մարմին, պետք է հնարավորություն ունենա իրականացնելու իր հիմնական՝ արդարադատության գործառնությունը: Քննարկվող սահմանադրական նորմի մեկնաբանությունների համաձայն ևս օրենքի միատեսակ կիրառության ապահովումը վճռաբեկ դատարանի միակ գործառնությունը համարվել չի կարող, քանի որ որպես դատարան՝ այն առաջին հերթին կոչված է իրականացնելու արդարադատություն: Այդ նույն մեկնաբանություններում դատավարական գործառնությունների եռատարր (հիմնարար-հիմնական-լրացուցիչ) դասակարգման՝ տեսականորեն մշակված մոդելը վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի վրա տեղայնացնելով՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովումը դիտվում է որպես վճռաբեկ դատարանի հիմնական դատավարական գործառնություն, որն առկա է արդարադատության հիմնարար գործառնության հետ մեկտեղ<sup>1</sup>: Ըստ այդմ, վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանոնակարգումը, կարծում ենք, պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի ընտրողական արդարադատության իրականացումն այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է անձի հիմնարար իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալներին: Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ օրենքի միատեսակ կիրառության և արդարադատության իրականացման գործառնությունների ողջամիտ հավասարակշռման ապահովման նպատակով մեր կարծիքով մի կողմից պետք է շարունակի գործել բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգ՝ որպես օրենքի միատեսակ կիրառության

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր., «Իրավունք», 2010, էջ 909:

արդյունավետ իրակացման երաշխիք, մյուս կողմից այդ հիմքերի շրջանակից չպետք է բացառվեն անձի հիմնարար իրավունքներին և ազատություններին առնչվող դատական սխալի դեպքերը՝ ապահովելով Վճռաբեկ դատարանի կողմից արդարադատության իրականացումը: Ըստ էության այդ գաղափարն է զարգացված ՀՀ սահմանադրական փոփոխությունների նախագծի 171-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանն դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Սահմանադրաիրավական այս պահանջի ինկորպորացում կարող է դիտարկվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագծով առաջարկվող հավասարակշռված կարգավորման մոդելը՝ համաձայն որի վճռաբեկ բողոքն ընդունվում է վարույթ եթե առկա է դատական սխալ և միաժամանակ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար կամ եթե առկա է ոչ թե ցանկացած, այլ կոպիտ դատական սխալ՝ անկախ օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ վճռաբեկ վերանայման մեխանիզմը որպես դատական ակտերի վերանայման ձև, ի տարբերություն դատական ակտերի վերանայման մյուս ձևերի, բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- 1) այն դատական ակտերի վերանայման հայեցողական ձև,
- 2) այն ենթադրում է վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայում,
- 3) այն ենթադրում է դատական ակտերի վերանայում սուկ իրավունքի հիմքով,
- 4) ունի հատուկ նպատակային նշանակություն՝ ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

**Այսպիսով, վճռաբեկ վերանայման մեխանիզմը կարելի է բնորոշել որպես ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայման հայեցողական ձև, որի արդյունքում վճռաբեկ ատյանը, նպատակ ունենալով ուղղելու դատական սխալ-**

ները և ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, ստուգում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը՝ նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման և դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանման տեսանկյունից:

*Татевик Суджян*

*Аспирант кафедры уголовного процесса и криминалистики*

Статья посвящена проблеме правовой сущности Кассации как одной из форм судебного пересмотра. Она раскрывает основные черты Кассации на основе сравнительного анализа других форм пересмотра. В статье так же выявлены основные задачи Кассации - исправление судебных ошибок и единое применение закон, и проблемы их соотношения.

*Sujyan Tatevik*

*PHD Student of the YSU Chair of Criminal procedure and Criminalistics Chair*

The article is devoted to the theoretical issues of the legal essence of Cassation as a form of judicial review. It reveals the main distinctive features of Cassation based on the comparative analysis of different forms of judicial review. The article also refers to the problem of uniform application of law as one of the main issues of Cassation.

**Բանալի բառեր՝** մաքուր վճռաբեկություն, խառը վճռաբեկությունը, վերաքննություն, մասնավոր բողոքարկում, բացառիկ վերանայում, հայեցողական վերանայում, օրենքի միատեսակ կիրառություն, դատական սխալների ուղղում

**Ключевые слова:** чистая кассация, смешанная кассация, апелляция, частное обжалование, экстраординарное обжалование, дискреционный пересмотр, единое применение закона, исправление судебных ошибок.

**Key words:** Pure cassation, impure cassation, appeal, private review, extraordinary review, discretionary review, uniform application of law, correction of miscarriage of justice